

Մրցույթի հայտարարություն

ՀՀ „Վայոց ձորի մարզի Սալլիի հիմնական դպրոց,, ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ, Սալլիի և Հորսի հիմնական դպրոցների միացիալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են Սալլիի հիմնական դպրոցում

2021 թվականի հոկտեմբերի 26 -ից մինչև նոյեմբերի 15 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9⁰⁰ -ից մինչև ժամը 15⁰⁰-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչաշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 29 -ին՝ ժամը 14⁰⁰-ին,

Վայոց ձորի մարզի Սալլիի հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, գյուղ Սալլի, 2-րդ փողոց, շենք 3:

Տեղեկությունների համար դիմել Հայկազ Ղազարյանին.

Հեռ. 094694036,

Էլ. հասցե՝ gazaryanhaykaz87@gmail.com: